

## Իրականացվեց բանակ-հասարակություն կապի ամրապնդմանն ուղղված հերթական միջոցառումը

29.10.2015

Գավառ քաղաքում ՀՀ Պաշտպանության նախարարության եւ Գեղարքունիքի մարզպետարանի համատեղ նախաձեռնությամբ կայացավ բանակ-հասարակություն կապի ամրապնդմանն ուղղված հերթական միջոցառումը: ՀՀ ՊՆ բանակային չորրորդ զորամիավորման հրամանատարությունը Գավառի մշակույթի պալատում հրավիրված միջոցառման ժամանակ խրախուսեց ծառայության մեջ աչքի ընկած գեղարքունիքցի 24 զինծառայողներին ու նրանց ծնողներին: Միջոցառման սկզբում Տերունական աղոթք հնչեցրեց Գեղարքունյաց թեմի հոգևոր հովիվ Տեր-Գնել քահանա Մարտիրոսյանը՝ իր խոսքում խաղաղություն մաղթելով մեր հայրենիքին, անվտանգ ու ապահով ծառայություն՝ Հայոց բանակի զինվորներին: Ծառայության մեջ աչքի ընկած զինվորներին եւ ծնողներին դրվատեց Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը: <<Դուք հերոս զավակներ եք ծնել, ովքեր այսօր անասան կանգնած են հայրենիքի պաշտպանության դիրքերում: Միրելի ծնողներ, մեր փոխադարձ շփումների ընթացքում դեռ չի եղել զորամիավորման կամ զորամասի մի հրամանատար, որ դժգոհություն հայտնի Գեղարքունիքի մարզից զորակոչված զինծառայողներից, եւ ինձ մնում է միայն հպարտանալ ձեզնով ու ձեր զավակներով: Պատմության մեջ առաջին անգամ մենք մեր հակառակորդին կարողացանք ցույց տալ, որ ուժը քանակի մեջ չէ, եւ այդ հաղթանակին տեր կանգնողն այսօր ձեր հերոս տղաներն են>>-ի խոսքում նշեց Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը: Զարամիավորման հրամանատարությանը իր շնորհակալական խոսքն ուղղեց զինծառայողի ծնող Կարինե Հովհաննիսյանը: Պարգևատրման արարողությունից առաջ ելույթ ունեցավ ՀՀ ՊՆ բանակային չորրորդ զորամիավորման հրամանատար, գեներալ-մայոր Անդրանիկ Մակարյանը: <<Երբ մենք ունենք ազգասիրություն, հայրենապաշտություն ու անպարտ ոգի, թշնամու ամեն մի սպառազինություն ու քանակական առավելություն ի չիք են դառնում, ինչպես որ եղավ Արցախում: Եվ ես համոզված եմ, որ նման ոգով, որ կրում են ձեր զավակները, հնարավոր կլինի ոչ միայն պաշտպանել եղածը, այլ նաեւ հետ բերել մեր մյուս կորսված աշխարհները>>-ներկաներին դիմեց Անդրանիկ Մակարյանը:

Միջոցառման մասնակիցներին երաժշտական կատարումներով ողջունեցին Գավառ քաղաքի Հ. Թալալյանի անվան երաժշտական դպրոցի սաները: Այնուհետ զորամիավորման հրամանատար, գեներալ-մայոր Անդրանիկ Մակարյանը շնորհակալագրերով պարգևատրեց աչքի ընկած զինծառայողների ծնողներին: Բանակ-հասարակություն կապի ամրապնդման գործում ունեցած ավանդի համար Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը Գեղարքունիքի մարզպետի շնորհակալագրով պարգևատրեց ՀՀ ՊՆ բանակային չորրորդ զորամիավորման հրամանատար Անդրանիկ Մակարյանին: ՀՀ ՊՆ բանակային չորրորդ զորամիավորման հրամանատարի շնորհակալագրով պարգևատրվեց Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը: